600.0039.10.02.21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՈՐՈՇՈՒՄ

10 փետրվարի 2021 թվականի №39Ա
քաղ. Երևան

«ՀՐԱԶԴԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՀՐԱԶՋԷԿ)» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2020 թվականի օգոստոսի 19-ի «Հանրային կազմակերպությունների ցանկը հաստատելու, այդ կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ պահանջները, դրանց մոնիթորինգի և հաշվետվությունների ներկայացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» №273Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) 5-րդ կետի համաձայն՝ «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) պարտավոր էր մինչև Որոշումն ուժի մեջ մտնելը, իր հաստատած գնումների կարգը համապատասխանեցնել Որոշման 2-րդ կետով սահմանված պահանջներին և Հանձնաժողով ներկայացնել համապատասխան տեղեկատվություն,

բ) 2021 թվականի հունվարի 14-ից Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ՝ Հանձնաժողովի Որոշման 5-րդ կետի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, քանի որ Ընկերության

կողմից նշված պահանջի կատարման վերաբերյալ Հանձնաժողովում տեղեկատվություն չի եղել,

գ) Ընկերությունը հարուցված վարչական վարույթի շրջանակում 2021 թվականի հունվարի 20-ի №10 և փետրվարի 2-ի №12 գրություններով հայտնել է, որ Ընկերության գնումների իրականացման կարգի մասին կանոնադրությունը համապատասխանեցվել է Որոշման 2-րդ կետով սահմանված պահանջներին և հաստատվել է տնօրենների խորհրդի 2020 թվականի դեկտեմբերի 30-ի №18/20-ՀՆ որոշմամբ,

դ) Հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերության կողմից Որոշման 5-րդ կետը չի խախտվել,

և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարճել Ընկերության նկատմամբ Որոշման 5-րդ կետի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով 2021 թվականի հունվարի 14-ին հարուցված վարչական վարույթը:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱԳՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
10 փետրվարի 2021 թ.